

տրամութեամբ ելի ի նմանէ : Եւ ասին թէ 195
այս եկեղեցիս կուսանաց վանք էր :

ԱԹ՝ ՄՅՅՏԱՆ

Եւ կայր այս եկեղեցոյս առջեւն մեծ մօյ-
տան մի, զոր Աթ մօյտան կոչեն. եւ էր անդ
սիւն մի մեծ եւ բարձր՝ կանգնեցուցած միա-
վերթ մարմարիոնէ ի վերայ ուրիշ սեան, 200
հաստատեալ ի վերայ չորս պղնձէ առիւծու.
հնարիւք եւ բազմիմաստ հանճարիւք զահա-
գին սիւնն հանած էր. որ տեսողացն էր հրա-
շալի : Եւ բնաւ չաւտայ մարդ, թէ զայն հո-
ղածին մարդու է շինած, այլ թէ զիւաց կամ 205
քաջից սահմանած. բայց դրած էր հռոմի եւ
Փռանկի գրով, թէ մէկ վարդապետ մի Ֆէն-
տով է հանել զգա : Փառք Աստուծոյ. ամէն :

Եւ քայլ մի քանի այլ առաջ զնացեալ
տեսի օձ մի պղնձէ երեքլիսեան, բարձրու- 210
թիւն երեք մարդապոյ, իսկ հաստութիւն՝
զիւրկ մի, որ պատեալ էին զմիմիամբք : Եւ
հարցի թէ զի՞նչ է պատճառն. եւ ասեն թէ
այս տիւսմ է՝ իմաստնոցն հնարեալ. քանզի
քաղաքս այս յոյժ օձուտ էր, որ բնաւ ամե- 215
նեւին մարդ չկարէր աչք բանալ. վասն այն
պայս օձս բարձրացուցին եւ իսկոյն կորեան
եւ ջնջեալ սատակեցան օձքն եւ այլ ոչ եւս
երեւեցան : Ըստ օրինակի Մովսէսի ի հին
օրէնքն որ օձիւ սատակեաց զամենայն օձսն, 220